ՍԱՐԳԻՍ ՋՈՒՂԱՑԵՑԻ.— 1631ին ուխտաւորութեամբ այցեւյած է Ս. Յակոբի վանքը, Գրիգոր Պարոնտէր պտրքի օրով, և նորոգած է Ս. Յարութեան տաճարի մօտ, Ս. Յովհաննէս Աւետարանիչ անունով եկեղեցին, ինչպէս յայտնի է նոյն եկեղեցիին ճակատը դրուած քարէ յիշատակարանէն, որուն օրինակը կը դնենք հոս.

«Յիշեցէք, Քրիստոս Աստուած, ողորմի ասացէք Ջղլի. Խնոնց. մահտեսի Սարգիսին և իւր ծնողացն և կողակցին և որդւոցն և ամենայն արեան մերձաւորացն, որ աւգնութիւն արար «Տրաւք» ողորմութեան վասն նորոգութեան Ս. Յովհաննէս Առաքելոյն Աւետարանչին Յս.ի Քս.ի. տէր Աստուած իւր վարձահատոյց առնէ և երկնից արքայութեան արժանի արասցէ «հանդերձ ամենայն ընտանեօք». յամի թվ. ՌՁ(=1631) ամէն»։

ՍԱՐԳԻՍ ՍՐԿ. ԵՒԴՈԿԻԱՑԻ.— Աշկ. Հեղահոգի Յարութիւն վրդ.ի (աշկ. Կոլոտի). Փկե. (1775—1800). իր աշխատութեամբն ու ջանքերովը՝ Կիպրոսի առաջնորդութեան խնդիրը կը լուծուի ի նպաստ Ս. Յակոբի վանքին. կը վախճանի 1800ին և կը թաղուի Բերայի Բանկալթիի գերեզմանատունը, ուր մինչև հիմայ կը մնայ իր տապանագիրն՝ որ է հետևեալը.

«Շիրիմ վիմածածք, յիւրում տապանի,
Ունի ի պահեստ, այր մի պիտանի,
Որ է յԵւդոկիա քաղաքին ծնեալ
Յետոյ ի Բիւզանդ կրթութեամբ սընեալ.
Յարութիւն պետին, աշակերտ մտեալ,
Համեստ և զգօն, հր(աշա)կերտ գտեալ։
Սարգիս փոխանորդ, սարկաւագ արքի
Խոհեմ Գրիգորի, հեզ պատրիարքի։
Ապա, փոխանորդ Սաղիմայ կարգեալ,
Ի Ստամպօլ եկաց, մինչ ի մահ յարգեալ։
Փոքր ինչ ժամանակ, յախտս սովոյ նեղեալ,
Դարմանք բժշկաց, չահ օգտի չեղեալ։
Զուեալ ի կենաց, յութսուն հասակի,
Յուսով փափա(ք)եալ, վերնում պսակի։
Թիւ հայոց հազար, և երկու հարիւր
Քառասունեւինն, ըստ նոյն համարիւր.